

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 5

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի 2012թ. նոյեմբերի 28-ի նիստի

Խորհրդի 32 անդամներից ներկա էին 26-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ Գ. Ղազինյանը, քարտուղարում խորհրդի քարտուղար Տ. Դավթյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգի հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

Օրակարգ.

1. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ուսմանական առարկայական ծրագրի օրինակելի ձևի հաստատման մասին (զեկ.՝ ամբիոնների վարիչներ):

2. 2011-2012 ուսումնական տարվա առաջին կիսամյակում ուսանողության շրջանում անցկացված անանուն սոցիալոգիաների արդյունքների ամփոփման մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչներ):

3. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի հեռակա ուսուցմամբ ասպիրանտների առեստավորման մասին (զեկուցող՝ ամբիոնների վարիչներ):

4. 2012-2013 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի նախապատրաստման աշխատանքների և ընթացքի մասին (զեկուցող՝ դեկանի տեղակալ, ի. գ. դ. Հ. Խաչիկյան):

5. Ընթացիկ հարցեր:

1. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ուսմանական առարկայական ծրագրի օրինակելի ձևի հաստատման մասին (զեկ.՝ ամբիոնների վարիչներ):

ԼՄԵՑԻՆ. Ամբիոնների վարիչները ներկայացրեցին իրենց դիտողություններն ու առաջարկությունները ուսումնական առարկայական ծրագրի նախագծի վերաբերյալ :

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ա. Հայկյանցը, Վ. Այվազյանը, Տ. Բարսեղյանը, Ա. Վաղարշյանը, Ս. Դիլբանդյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ներկայացված նախագծում կատարել համապատասխան փոփոխություններ ու լրացումներ և գիտխորհրդի առաջիկա նիստում ներկայացնել նախագծի լրամշակված տարբերակը:

2. 2011-2012 ուսումնական տարվա առաջին կիսամյակում ուսանողության շրջանում անցկացված անանուն սոցիալոգիաների արդյունքների ամփոփման մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչներ):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Զեկուցողները ներկայացրեցին, որ ուսանողների շրջանում անցկացված հերթական անանուն սոցիոլոգիական հարցումների արդյունքները քննարկվել են ամբիոնների նիստերում, հատուկ ուշադրություն է դարձվել հարցման թերթիկի այն հարցերի վրա, որոնցից ամբիոնի դասախոսները համեմատաբար ցածր գնահատականներ են ստացել: Նշվեց նաև, որ անընդհատ կատարելագործման կարիք են զգում նաև հարցաթերթիկում ընդրկված հարցերը՝ դրանք ուսանողի համար ավելի պարզ և մատչելի դարձնելու նպատակով: Ըստ զեկուցողների՝ անհրաժեշտ է նաև վերանայել հարցման մասնակիցների շրջանակը՝ դրա համար ընտրելով որոշակի օբյեկտիվ չափանիշներ: Բացի այդ, գնահատման գործընթացում սուբյեկտիվ գործոնի դերը նվազեցնելու նպատակով առաջարկվեց հարցումներն անցկացնել համապատասխան դասընթացի ավարտից անմիջապես հետո՝ մինչև քննաշրջանի սկսվելը, իսկ արդյունքները հրապարակել քննաշրջանի ավարտից հետո:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Վ. Այվազյանը, Տ. Բարսեղյանը, Ա. Վաղարշյանը, Ս. Դիլբանդյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ ուսանողների շրջանում անցկացված անանուն սոցիոլոգիական հարցումների արդյունքներն ընդունելի գիտություն,

բ/ հանձնարարել ամբիոններին մշտապես ուշադրության կենտրոնում պահել հարցացանկի այն կետերը, որոնց վերաբերյալ ամբիոնի և առանձին դասախոսների միջին գնահատականը ցածր է:

3. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի հեռակա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորման մասին (զեկուցող՝ ամբիոնների վարիչներ):

ԼՄԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ամբիոնների վարիչները ներկայացրեցին հեռակա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորման մասին միջնորդությունները և հայտնեցին ամբիոնների դրական կարծիքները այդ կապակցությամբ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Վ. Այվազյանը, Տ. Բարսեղյանը, Ս. Մեղրյանը, Ա. Վաղարշյանը, Ս. Դիլբանդյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ամբիոնների դրական կարծիքները, հաշվետու տարում ասպիրանտների կատարած աշխատանքները, բավարարել ամբիոնների միջնորդությունները և ատեստավորել հեռակա ուսուցմամբ ասպիրանտներին:

4. 2012-2013 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի նախապատրաստման աշխատանքների և ընթացքի մասին (զեկուցող՝ դեկանի տեղակալ, ի. գ. դ. Հ. Խաչիկյան):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Հ. Խաչիկյանը ներկայացրեց, որ քննաշրջանը բակալավրիատում սկսվում է 2012 թվականի դեկտեմբերի 15-ից, մագիստրատուրայում՝ դեկտեմբերի 24-ից և շարունակվելու է մինչև դեկտեմբերի 30-ը: Հունվարի 8-ից կսկսվեն քննությունները մինչև հունվարի 27-ը: Իսկ փետրվարի 3-ից փետրվարի 12-ը նախատեսվում է անցկացնել առաջին լուծարքային շրջանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Վ. Այվազյանը, Ա. Վաղարշյանը, Ս. Դիլբանդյանը, Տ. Բարսեղյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. 2012-2013 ուս. տարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի ընթացքի մասին հաղորդումն ընդունելի գիտություն:

5.1. ԼՄԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը Քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ, դոցենտ Ս. Մեղրյանի «Ապացուցումը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում» վերտառությամբ ուսումնական ձեռնարկը տպագրության երաշխավորելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ա. Մարգարյանը, Ս. Մեղրյանը, Տ. Բարսեղյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով քաղաքացիական դատավարության ամբիոնի միջնորդությունը և ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը, ինչպես նաև այն, որ նշված աշխատությունը գրված է պատշաճ մակարդակով, ունի գործնական կարևոր նշանակություն, երաշխավորել տպագրության:

5.2. ԼՄԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դասախոս Ա. Չախոյանի «Մասնագետի հատուկ գիտելիքների և դրանց կիրառման քրեադատավարական և կրիմինալիստիկական հիմնախնդիրները» վերտառությամբ մենագրությունը տպագրության երաշխավորելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ա. Մարգարյանը, Ս. Դիլբանդյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի միջնորդությունը և ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը, ինչպես նաև այն, որ նշված աշխատությունը գրված է պատշաճ մակարդակով, ունի գործնական կարևոր նշանակություն, երաշխավորել տպագրության:

5.3. ԼՍԵՑԻՆ. Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի միջնորդությունը Սլավոնական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի քրեական և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի հայցորդ Արմեն Մուրադյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ս. Դիլբանդյանը, Հ. Ղուկասյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաստատել Արմեն Մուրադյանի «Դատավարությանը մասնակցող անձանց պետական պաշտպանության հիմնախնդիրները ՀՀ քրեական դատավարությունում» վերտառությամբ ատենախոսության թեման, մասնագիտությունը՝ իրավաբանական գիտություններ, շիֆրը ԺԲ.00.04 – «Դատական իրավունք, դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն»,

բ/ Արմեն Մուրադյանի գիտական ղեկավար նշանակել իրավ. գիտ. գոկտոր, դոցենտ Մ. Խաչատրյանին:

5.4. ԼՍԵՑԻՆ. Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի հեռակա ասպիրանտ Տաթևիկ Մուջյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ս. Դիլբանդյանը, Հ. Ղուկասյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաստատել Տաթևիկ Մուջյանի «Վճռաբեկությունը որպես դատական ակտերի վերանայման ձև ՀՀ քրեական դատավարությունում» վերտառությամբ ատենախոսության թեման, մասնագիտությունը՝ իրավաբանական գիտություններ, շիֆրը ԺԲ.00.04 – «Դատական իրավունք, դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն»,

բ/ Տաթևիկ Մուջյանի գիտական ղեկավար նշանակել իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գ. Ղազինյանին,

գ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

5.5 ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը Սլավոնական համալսարանի քաղաքացիական և քաղաքացիական դատավարության իրավունքի ամբիոնի ասպիրանտ Մարիամ Էվոյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Տ. Բարսեղյանը, Ա. Հայկյանցը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաստատել Մարիամ Էվոյանի «Ընդհանուր սեփականության ինստիտուտը ՀՀ քաղաքացիական իրավունքում /արդի վիճակը և զարգացման միտումները/»

վերտառությամբ ատենախոսության թեման, մասնագիտությունը՝ իրավաբանական գիտություններ, շիֆրը ԺԲ.00.03 – «Քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք»,

բ/ Մարիամ Էվոյանի գիտական ղեկավար նշանակել իրավ. գիտ. դոկտոր, դոցենտ Ա. Հայկյանցին:

5.6. ԼՍԵՑԻՆ. Սահմանադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի հեռակա ասպիրանտ Արտաշես Խլղաթյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ն. Այվազյանը, Ռ. Եղյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:
ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաստատել Արտաշես Խլղաթյանի «ՀՀ կառավարման ձևի սահմանադրաիրավական ամրագրումը» վերտառությամբ ատենախոսության թեման, մասնագիտությունը՝ իրավաբանական գիտություններ, շիֆրը ԺԲ.00.02 – «Հանրային իրավունք – սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում»,

բ/ Արտաշես Խլղաթյանի գիտական ղեկավար նշանակել իրավ. գիտ. թեկն., դոցենտ Վ. Այվազյանին,

գ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

5.7. ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը Սլավոնական համալսարանի քաղաքացիական և քաղաքացիական դատավարության իրավունքի ամբիոնի ասպիրանտ Հայկ Մալխասյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Տ. Բարսեղյանը, Ա. Հայկյանցը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:
ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաստատել Հայկ Մալխասյանի «Հանգամանքների փոփոխությունը և դրանց հետևանքները պայմանագրային հարաբերությունների համար» վերտառությամբ ատենախոսության թեման, մասնագիտությունը՝ իրավաբանական գիտություններ, շիֆրը ԺԲ.00.03 – «Քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք»,

բ/ Հայկ Մալխասյանի գիտական ղեկավար նշանակել իրավ. գիտ. դոկտոր Ա. Մկրտումյանին:

5.8. ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի ասպիրանտ Դավիթ Մկոյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Տ. Բարսեղյանը, Ա. Հայկյանցը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:
ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաստատել Դավիթ Մկոյանի «Կորպորատիվ իրավահարաբերություններում շահերի բախումը և վերահսկողությունը» վերտառությամբ ատենախոսության թեման, մասնագիտությունը՝ իրավաբանական գիտություններ, շիֆրը ԺԲ.00.03 – «Քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք»,

բ/ Դավիթ Մկոյանի գիտական ղեկավար նշանակել իրավ. գիտ. թեկն., դոցենտ Վ. Ավետիսյանին,

գ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

5.9. ԼՄԵՑԻՆ. Քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի ասպիրանտ Գոհար Հակոբյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Տ. Բարսեղյանը, Ա. Հայկյանցը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:
ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաստատել Գոհար Հակոբյանի «Բժշկական գաղտնիքի քրեաիրավական պաշտպանությունը» վերտառությամբ ատենախոսության թեման, մասնագիտությունը՝ իրավաբանական գիտություններ, շիֆրը ԺԲ.00.05 – «Քրեական իրավունք և կրիմինոլոգիա, քրեակատարողական իրավունք»,

բ/ Գոհար Հակոբյանի գիտական ղեկավար նշանակել իրավ. գիտ. թեկն., դոցենտ Ա. Մարգարյանին,

գ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

5.10. ԼՄԵՑԻՆ. Քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Էդգար Հովհաննիսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ա. Գաբուզյանը, Ա. Մարգարյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:
ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաստատել Էդգար Հովհաննիսյանի «Թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը Հարավային Կովկասում» վերտառությամբ ատենախոսության թեման, մասնագիտությունը՝ իրավաբանական գիտություններ, շիֆրը ԺԲ.00.05 – «Քրեական իրավունք և կրիմինոլոգիա, քրեակատարողական իրավունք»,

բ/ Էդգար Հովհաննիսյանի գիտական ղեկավար նշանակել իրավ. գիտ. թեկն., դոցենտ Տ. Սիմոնյանին,

գ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

5.11. ԼՄԵՑԻՆ. Քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Գոհար Սիմոնյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ա. Գաբուզյանը, Ա. Մարգարյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:
ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաստատել Գոհար Սիմոնյանի «Մարդկային էմբրիոնի և պտղի քրեաիրավական պաշտպանությունը» վերտառությամբ ատենախոսության թեման, մասնագիտությունը՝ իրավաբանական գիտություններ, շիֆրը ԺԲ.00.05 – «Քրեական իրավունք և կրիմինոլոգիա, քրեակատարողական իրավունք»,

բ/ Գոհար Սիմոնյանի գիտական ղեկավար նշանակել իրավ. գիտ. թեկն., դոցենտ Ա. Մարգարյանին,

գ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

5.12. ԼՄԵՑԻՆ. Քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ՀՀ ոստիկանության կրթահամալիրի հեռակա ուսուցման ասպիրանտ Արա Ֆիդանյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ա. Գաբուզյանը, Ա. Մարգարյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:
ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաստատել Արա Ֆիդանյանի «Էքստրադիցիայի քրեաիրավական կարգավորումը» վերտառությամբ ատենախոսության թեման, մասնագիտությունը՝ իրավաբանական գիտություններ, շիֆրը ԺԲ.00.05 – «Քրեական իրավունք և կրիմինոլոգիա, քրեակատարողական իրավունք»,

բ/ Արա Ֆիդանյանի գիտական ղեկավար նշանակել իրավ. գիտ. թեկն., դոցենտ Ս. Առաքելյանին,

գ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

5.13. ԼՍԵՑԻՆ. Քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Ժենյա Ստեփանյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ա. Գաբուզյանը, Ա. Սարգսյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:
ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաստատել Ժենյա Ստեփանյանի «Հանցագործությունների բացահայտման կամ ապացուցման հանձնարարություն կատարելը որպես արարքի հանցավորությունը բացառող հանգամանք» վերտառությամբ ատենախոսության թեման, մասնագիտությունը՝ իրավաբանական գիտություններ, շիֆրը ԺԲ.00.05 – «Քրեական իրավունք և կրիմինոլոգիա, քրեակատարողական իրավունք»,

բ/ Ժենյա Ստեփանյանի գիտական ղեկավար նշանակել իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա. Գաբուզյանին,

գ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

Խորհրդի նախագահ

Գ. Ղազինյան

Խորհրդի քարտուղար

Տ. Դավթյան